

ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ԵՐԿՐԱՄԱՍ

ՍՏԱՎՐՈՊՈԼ ՔԱՂԱՔ

Հյուսիսային կովկասի հայկական նկատելի դաղթօջախներից է եղել նաև Ստավրոպոլ քաղաքը: Ա. Զալալյանն իր «Ճանապարհորդութեան» մեջ նշում է, որ XIX-րդ դարի 50-ական թվականներին այստեղ ապրում էին բաղմաթիվ հայ ընաանիքներ, որոնք ղղալի դեր էին կաարում հասարակական կյանքի ըոլոր ասպարեզներում¹: Հայոց քարաշեն դմբեթակիր եկեղեցին կառուցել են նոր Նախիջևանից Սաավրոպոլ աեղափոխված 70 հայ վաճառականները: Հայ մանուկների կրթության և դաստիարակության գործում մեծ դեր է կաաարել Սլաջալյանցի հիմնադրած դպրոցը: Մեծահարուսա Գաբրիել Թամամչյանցը քակաքն ապահովել է խմելու ջրով:

Մեր շրջադայության ժամանակ պաամական արժեք ներկայացնող էին հայկական հուշարձաններ այլես դոյություն չունեին:

ԳԵՂՐԳԻԵՎԸԿ

Գեղրգիեսկում ապրող հայերն ունեցել են իրենց կրթական օջախը, եկեղեցին, սակայն այսօր դրանք չեն պահպանվել:

ՊՅԱՏԻԳՈՐԸԿ

Առողջարանային այս քաղաքում նույնպես կարեոր հայկական հուշարձաններ չեն մնացել: Մաշուկ սարի լանջին դանվող գերեղմանոցում՝ Մ. Թու. Լերմոնավի մենամարաելու վայրից քիչ հեռու, նկաացինք սկ մարմարից կերտված մի աապանաքար, որի վրա եղնդավոր աառերով կար ոռուերեն 9 առդ.

580. АЛЕКСАНДР НИКОЛАЕВИЧ/ ВАРТАНОВ/. РОД. 1917 Г., УМ. $\frac{25}{6}$ 1932./ НЕ ПОЗНАВ

В 15 ЛЕТ/ ДНЕЙ РАДОСТНЫХ ДЕТСТВА/, ОСТАВИВ В СКОРВИ ОТЦА, / МАТЬ,/ СЕСТЕР/, НАШЕЛ ТЫ ВЕЧНЫЙ ПОКОЙ/ ЗДЕСЬ У ПОДОШВЫ МАШУКА.

Լուսանկ. 150

ՆՈՐ ԵԴԵՍԻԱ. (ՆԱԽԿԻՆ՝ ՂՈՐԱ, ՂՈՐԱՅԻ)

Այս ընդարձակ բնակավայրը դանվում է Սաավրոպոլի երկրամասի Կուրսկայա կոչվող շրջկենարոնից վեց կիլոմետր հեռավորությամբ՝ դեպի Մողդոկ դնացող մայրուղու վրա: Նոր եղեսիայում այժմ ապրում են ավելի քան 7000 հայեր, որոնք, չնչին բացառությամբ, մոռացել և մոռանում են մայրենի լեղուն՝ հայերենը: Նրանք խոսում են ոռուերեն, իսկ տանը՝ պարսկերենի ենթարրառուով: Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի կարծիքով, այսաեղի բնակիչները, իբրև թե՝ «ճողը եկամուա ցեղեր են, որոնք 18-րդ դարում ոռուաց Զուրով դորավարի հեա տեղափոխվել են հիշյալ վայրերը»²: Իրոք որ նոր եղեսիայի աղդարնակչու-

1 Ա. Զալալյան, Բ, էջ 453:

2 Մ. Բարխուդարյան, Պատմութիւն Աղուանից աշխարհի, մասն Ա. Թիֆլիս, 1893 էջ 26: